

ՊԱՏՄԱԿԱՆ

ՎԼԽԱԽՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆՔ ԳԱՅԱՍՏԱՆԻ

(Դ.-Ժ. ԴԱՐ)

Սոյն գրութեան նպատակն է ամփոփ դիտելով ներկայացնել Մեծ Հայքի այն եպիսկոպոսութիւնները, որոնց աթոռակայնները կարեւոր պատմական դեր կատարած են մեր օրգային եկեղեցական կեանքին մէջ:

Դասաւորութիւնը կատարուած է Համաձայն նաշանդներու, գաւառներու կամ տոճմերու: Առաւելապէս կեդրոնական նաշանդներու — Տուրուբերան, Վասպուրական, Այրարատ — եպիսկոպոսներն են որ կաթողիկոսին շուրջը Հաւաքուած կը վարեն եկեղեցական գործերը, կը գումարեն ժողովներ, կը կատարեն Հայրապետական ընտրութիւն, եւլլն:

Վերսիյեալ երեք մեծ նաշանդներէն ետք կարեւոր դեր ունին ուրիշ երեք նաշանդներ ալ — Մոկք, Սիւնիք, Տայք — որոնց նաշանդային եպիսկոպոսները յաճախ կ'երեւին Հայրապետին մօտ եւ կը մասնակցին եկեղեցւոյ գործերուն յանձնաձեւով:

Ատոնցմէ դուրս երկու տասնեակ եպիսկոպոսութիւններ ալ յիշուած են ատեն ատեն, մէկ կամ երկու ներկայացուցիչներով, որոնք լին մտած այս գրութեան ծրարքին սէջ:

Հայ եպիսկոպոսութեանց աւագութեան կարգը ցոյցնող երեք զահնամակներ Հասած են մեզի, կազմուած իրարմէ ոչ շատ հեռու մասնակներու մէջ. առանք են,

Ա. — Մամուէլ Կամըլձորեցիի կազմածը, որ պահուած է Մխիթար Այրիվանեցիի մօտ, եւ կը պարունակէ 38 աթոռներ. — Յովսէփեանց, Մխ. Այրիվանեցի, 1931, էջ 20:

Բ. — Ուխտանէս պատմիչի կազմածը, որ կը պարունակէ 30 աթոռներ. — Ուխտանէս, Վաղարշապատ, 1871, էջ 100:

Գ. — Մշոյ Ս. Աղբերիկ Վանքի Կոնդակիի

Հեղինակին կազմածը, որ կը պարունակէ 31 աթոռներ. — Յովսէփեան, Յիշտ. Առաւգրաց, էջ 187:

Դ. — Նախ կ'առնենք Տուրուբերան նաշանդը, որուն 16 գաւառներէն 7 կամ 8 Հատին եպիսկոպոսները ուրծօն եւ կարեւոր դեր կը կատարեն Դ-ժ դարերուն մեր եկեղեցւոյ կեանքին մէջ: Իւրաքանչիւր գաւառի եպիսկոպոսական աթոռին կարգը կը նշանակենք Համաձայն վերոյիշեալ զահնամակներուն եւ ձանօթ եպիսկոպոսները կը ներկայացնենք յաջորդաբար ժամանակագրական կարգով:

Ա. — Տարօնոյ (Մամիկոններից) եպիսկոպոսներ. — Մամուէլ Դ, Ուխտանէս ԺԲ, Կոնգակ ԺԱ:

1. — Սահակ Եպո. Տարօնոյ, մասնակցած է Արտաշատի Ժողովին (449). — Եղիշէ, Վենետիկ, 1859, էջ 22: Փարպեցի, Վենետիկ, 1933, էջ 134:

2. — Աբրահամ եպո. Մամիկոնէից (455? -485?), կը Համարուի աշակերտ Ս. Սահակի (Թ. Արծրունի, Պետերբուրգ, 1887, էջ 83): Թուղթ մը գրած է Աղուանից Վաչագան արքային շտակ նըջեցելոց» (Մ. Կաղանկատուագի, Մոսկվա, 1860, էջ 64-5):

3. — Մերչայուզ եպո. Տարօնոյ եւ Մամիկոններից (506-554), իր կէտարեան պաշտօնավարութեան շրջանին գործակցած է մասնաւորաբար Բարդէն եւ Ներսէս Բ. կաթողիկոսներուն. — Գրիք Թղթոց, էջ 41-76:

4. — Աբրահամ եպո. Տարօնոյ եւ Մամիկոններից, գործակցած է Յովհաննէս Բ. կաթողիկոսին (557-574), անոր պաշտօնավարութեան սկզբնական շրջանին յատկապէս. — Գ. Թղթոց, էջ 78-81:

5. — Կոմիտաս եպո. Տարօնոյ եւ Մամիկոններից (607-614). Նախ գործակից Աբրահ-

Համ կաթողիկոսին և սպա յաջորդ (615-628) :

6.— Եպիփան եպո. Տարօնոյ, վանահայր Գլակայ Վանուց. ընկերացած է Եղբ կաթողիկոսին երբ ան կ'երթար Կարին Հերակ, կայսեր ժող (չ. 633).— Ազգապատում, էջ 690 :

7.— Յովհաննէս եպո. Մամիկոնեան, Վանահայր Գլուկայ Վանուց և պոստմիջ (չ. 642) :

8.— Սահակ եպո. Մամիկոնեանց, ժամանակցած է Յովհան Օձնեցիի զուսարած Մանազկերտի Ժողովին (726).— Գ. Թղթոց, էջ 233 :

9.— Վահան եպո. Տարօնոյ, որ Վասիլ կայսրին կ'րոյէ թէ ինքը Արշակունի է, ուսովնեռև ժայրը հայ էր : Եւ կայսրը պատգամաւոր ժը կը զրկէ Աշոտ Բագրատունիին թագ խնդրելու անկէ (876).— Վարդան, Վենետիկ, էջ 85 :

10.— Գրիգոր եպո. Մամիկոնեանց, վարժանած է 973 թուին.— Յիշա. Չեռագրաց, էջ 127 :

1.— Արշամունեաց եպիսկոպոսներ.— Սամուէլ Թ, Ուխտանէս Ե, Կոնդակ ԺԷ :

1.— Տաճատ եպո. Արշամունեաց, զործակից Ներսէս Բ. կաթողիկոսի (554).— Գ. Թղթոց, էջ 73 :

2.— Վաղոտ եպո. Արշամունեաց : Գործակից Ներսէս Բ. կաթողիկոսի (554).— Գ. Թղթոց, էջ 73 :

3.— Գրիգոր եպո. Արշամունեաց, ժամանակցած է Դուինի Ժողովին, 645 թուին.— Ազգպ. էջ 712 :

4.— Թէոդորոս եպո. Արշամունեաց, ժամանակցած է Մանազկերտի Ժողովին.— Ազգպ. էջ 839 :

Գ.— Մարգարէոյ եպիսկոպոսներ.— Սամուէլ է, Ուխտանէս Գ :

1.— Եւղաղ եպո. Մարգարէոյ, ժամանակցած է Արտաշատի Ժողովին.— Եղիշէ, էջ 22 :

2.— Ներսէս եպո. Մարգարէոյ, ժամանակցած է Դուինի Ժողովին, Ներսէս Բ. կաթողիկոսի օրով (554) : Գործակցած է Յովհաննէս Բ. կաթողիկոսին (557).— Գ. Թրղթոց, էջ 73, 78 : Ազգպ. էջ 549, 559 :

3.— Յովհաննէս եպո. Մարգարէոյ, ժամանակցած է Դուինի Ժողովին, զուսարած Ներսէս Գ. կաթողիկոսի օրով (645).— Ազգպ. էջ 712 :

4.— Սողոմոն եպո. Մարգարէոյ, ժամանակցած է Մանազկերտի Ժողովին.— Ազգպ. էջ 839 :

Դ.— Հարթայ եպիսկոպոսներ.— Սամուէլ Ա, Ուխտանէս Ա, Կոնդակ Ա :

1.— Տեառնուոր եպո. Հարթայ, ժամանակցած է Դուինի Ժողովին (506).— Գրիգ Թղթոց, էջ 41 :

2.— Պարգեւ եպո. Հարթայ, զործակից Ներսէս Բ. կաթողիկոսին.— Գ. Թղթոց, էջ 73 :

3.— Ներսէս եպո. Հարթայ, ժամանակցած է Ներսէս Գ.ի օրով զուսարած Դուինի Ժողովին.— Ազգպ. էջ 712 :

4.— Ալիէնոս եպո. Հարթայ, ժամանակցած է Մանազկերտի Ժողովին.— Գ. Թղթոց, էջ 223 :

5.— Սահակ եպո. Հարթայ, ներկայ եղած է Պարտաւի Ժողովին (768).— Հանդ. Ամսօրեայ, 1905, էջ 367 :

Ե.— Բզնունեաց եպիսկոպոսներ.— Սամուէլ Ը, Կոնդակ ԺԳ :

1.— Սուրճակ եպո. Բզնունեաց, ժամանակցած է Արտաշատի Ժողովին.— Եղիշէ, էջ 22 : Փարպեցի, էջ 134 :

2.— Աբրահամ եպո. Բզնունեաց, խոստովանող, ձեռնադրուած է չ. 465ին.— Փարպեցի, էջ 343 :

3.— Սամուէլ եպո. Բզնունեաց, զործակից Բարդէն կաթողիկոսի.— Գ. Թղթոց, էջ 41 :

4.— Յովհանն եպո. Բզնունեաց, ժամանակցած է Դուինի Ժողովին, Ներսէս Գ. Իշխանի կաթողիկոսի օրով.— Ազգպ. էջ 712 :

5.— Եղիս եպո. Բզնունեաց, որ ապա եղաւ կաթողիկոս (703).— Ասողիկ, Պետերբուրգ, էջ 102 :

6.— Թէոդորոս եպո. Բզնունեաց, ժամանակցած է Մանազկերտի Ժողովին.— Գ. Թղթոց, էջ 223 :

2.— Գնունեաց եպիսկոպոսներ.— Սամուէլ Ի, Ուխտանէս ԺԸ, Կոնդակ ԺԸ :

1.— Պօզոս եպօ. Գնունեաց, զործակցած է Բարսէն կաթողիկոսին.— Գ. Թղթոց, էջ 42:

2.— Թէոզորոս եպօ. Գնունեաց, մասնակցած է Դուիքի ժողովին, Ներսէս Գ. կաթողիկոսի ժամանակ.— Յուցակ Զեռ. Երուսաղէմի, Բ. Հատոր, էջ 77: Երդակաթ, Վաղարշապատ, էջ 174:— Ուրիշ ձեռագրի մը մէջ Գնունեաց այս եպիսկոպոսին անունը կարգացուեր է Թաղէոս.— Ազգպ.— էջ 712:

3.— Յովհաննէս եպօ. Գնունեաց, մասնակցած է Մանազկերտի ժողովին.— Ազգպ.— էջ 839:

է.— Ապահունեաց եպիսկոպոսներ.— Սամուէլ ԺԶ, Ուխտանէս ԺԶ, Կոնդակ Թ:

1.— Երեմիա եպօ. Ապահունեաց, մասնակցած է Արտաշատի ժողովին.— Եղիշէ; էջ 22: Փարպեցի, էջ 134:

2.— Յոհան եպօ. Ապահունեաց, զործակցած է Ներսէս Բ. կաթողիկոսին.— Գ. Թղթոց, էջ 73:

3.— Քրիստափոր եպօ. Ապահունեաց, մին է Արբաշամ կաթողիկոսին ուղղուած մխարանական ձեռնարկը ստորագրողներէն (607) եւ Հետազային անոր զործակիցներէն (Գ. Թղթոց, էջ 151, 196: Կաղանկատուացի, Բ. խթ): Աւելի հազը կարճ շրջա՞ն մըն ալ պաշտօնավարած է իբրեւ կաթողիկոս (628-630).— Ազգպ.— էջ 677:

4.— Երեմիա եպօ. Ապահունեաց, մաս-

նակցած է Մանազկերտի ժողովին.— Ազգպ.— էջ 839:

Ը.— Խոսիստունեաց եպիսկոպոսներ.— Սամուէլ ԺԲ, Ուխտանէս ԺԴ, Կոնդակ ԺԴ:

1.— Ալան եպօ. Խոսիստունեաց, զործակցած է Բարսէն կաթողիկոսին.— Գ. Թղթոց, էջ 41:

2.— Մաշտոց եպօ. Խոսիստունեաց, զործակցած է Ներսէս Բ. եւ Յովհաննէս Գարեղեան կաթողիկոսներուն, Զ, դարու կիսուն.— Գ. Թղթոց, էջ 70, 73, 81:

3.— Մովսէս եպօ. Խոսիստունեաց, մին է Արբաշամ կաթողիկոսին ուղղուած ձեռնարկը ստորագրողներէն (607) եւ անոր Հետազայ զործակիցներէն.— Գ. Թղթոց, էջ 151, 196: Կաղանկատուացի, Բ. խթ:

4.— Գրիգոր եպօ. Խոսիստունեաց, մասնակցած է Դուիքի ժողովին, Ներսէս Գ. կաթողիկոսի օրով.— Ազգպ.— էջ 712:

5.— Սիմէոն եպօ. Խոսիստունեաց, զործակից Եղիա կաթողիկոսի, Ը, դարու ըսկիրը.— Կաղանկատուացի, Գ. ը:

6.— Նարկիսոս եպօ. Խոսիստունեաց, մասնակցած է Մանազկերտի ժողովին.— Ազգպ.— էջ 839:

7.— Դաւիթ եպօ. Խոսիստունեաց, յիշուած է 958 թուին, Անանիա Մոկացի կաթողիկոսի օրով.— Արաբատ, 1897, էջ 142:

Հոս կը վերջանան Տուրուբերան նահանգին պատկանող եպիսկոպոսութիւնները:

(Շար. 1)

Ն. ԵՊՍ. ՄՈՎԱԿԱՆ

